



Համագործակցություն՝ նոր ձեւաչափով



Մայիսի 20-ին արտակարգ իրավիճակների նախարար Սիեր Շահգելյանը ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկին Կոնսուելո Վիդալին: Հանդիպմանը մասնակցել են նաև ՄԱԶԾ աղետների նվազեցման խորհրդակցական, ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմի ղեկավար Նինո Անտաձեն, ՄԱԿ-ի մշտական համակարգողի օգնական Տաթև Կոլոյանը, Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը, տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Արամ Թանայանը, գնդապետ Նիկոլայ Գրիգորյանը:

Տիկին Վիդալը նշեց, որ ցանկանում էր անձամբ շնորհավորել նախարարին նշանակման կապակցությամբ, ներկայացնել Հայաստանի փրկարար ծառայության հետ իրականացվող ծրագրերը և քննարկել համագործակցության հեռանկարները: Նախարար Սիեր Շահգելյանը նշեց, որ նախարարության ստեղծումն արդեն իսկ վկայում է ոլորտի նկատմամբ կառավարության ուշադրության մասին: Չեւավորելով արտակարգ իրավիճակների նախարարություն՝ համակարգային մոտեցում է ցույց տրվել: Խնդիրը համալիր քաղաքականության մշակումն ու իրականացումն է այս ոլորտում: Նախարարության կառուցվածքում առավել խոշորը Հայաստանի փրկարար ծառայությունն է, որն ունի մեծ փորձ, կադրային լավ հնարավորություններ: Բացի ԳԾԾ-ից նախարարության կառուցվածքում են նաև տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, սեյսմիկ պաշտպանության ազգային, հայպետիդրոմետ, պետական ռեզերվների ծառայությունները: Նախարարությունը մշակելու է իրականացնելու է քաղաքականություն այս բոլոր ուղղություններով: Մեր նպատակը ոչ միայն Սպիտակի երկրաշարժ տեսած Հայաստանի համար հզոր կառույց ստեղծելն է, այլև հավակնում ենք մեծ կշիռ ունենալ ամբողջ տարածաշրջանում: Տարբեր աղետների ժամանակ Հայաստանն օգնության ձեռք է մեկնել Վրաստանին, Ռուսաստանին, Ուկրաինային, Թուրքիային, Իրանին, Հնդկաստանին ու Թաիլանդին: Այսօր մենք պատրաստ ենք փրկարարական ու նաև խորհրդատվական խմբեր ուղարկել Չինաստան:

Տիկին Վիդալը նշեց, որ ՄԱԿ-ի և ԱՆ-ի մոտեցումները համընկնում են: ՄԱԿ-ը տարածաշրջանային բազա ունի, որը կարող է օգտագործվել ԱՆ նախարարության կողմից: ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմը, որի մեջ ընդգրկված են ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները, կարող է օգնել ոչ միայն աղետներին օպերատիվ արձագանքելու համար, այլև՝ կանխարգելման միջոցառումների ժամանակ:

Կառավարությունն արձագանքում է



Կոտայքի մարզի Ողջաբերդ և Գեղաղիր գյուղերի հարավային հատվածներում՝ Գեղաղիր-Ջրաշեն հանդամանապարհին հարակից տարածքում է գտնվում ժամկետանց գյուղատնտեսական թունաքիմիկատների գերեզմանը: Սրա անվտանգությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 22-ի որոշմամբ միջոցառումներ էին նախատեսվել, և պետությունից համապատասխան գումար էր հատկացվել: 2005 թվականին ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտն իրականացրել էր որոշակի միջոցառումներ, սակայն չըջակա միջավայրը թունաքիմիկատներով աղտոտվելու սպառնալիքը չէր վերացել, այս հույժ կարելու էր հիմնախնդիրը վերջնականապես չէր լուծվել:

ՄԱԿ-ի օգնությամբ իրականացված աշխատանքները արդեն ցույց են տալիս, որ ծրագրի իրականացումը կարող է լինել արդյունավետ: ՄԱԿ-ի օգնությամբ իրականացված աշխատանքները արդեն ցույց են տալիս, որ ծրագրի իրականացումը կարող է լինել արդյունավետ: ՄԱԿ-ի օգնությամբ իրականացված աշխատանքները արդեն ցույց են տալիս, որ ծրագրի իրականացումը կարող է լինել արդյունավետ:

ՅՈՒՆԵՍԿՕ ԻՏՈՒՆԻՅԱՆ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՅԱՆ 4-ՈՒՆԻ ՀՇՏՈՒՄ

«Էլիտ Գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլևս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպ» երևանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն և էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երևան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

N 19 (244)

23.5.08-29.5.08
Շաբաթաթերթ

Քրոնիկոն
էջ 2, 3

Միջազգային
էջ 2

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ուղերձը
էջ 4

Նոր ցնցումներ Չինաստանում
էջ 5


«Նարգիզ» հետեւանքները
էջ 5

Ցունամի
էջ 6

Արտակարգ իրավիճակները ժամանցի վայրերում
էջ 7

Արտակարգ ժամանց
էջ 8

Գինը 100 դրամ



Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք

1-01, 1-12

Ավտոպատահարներ

Մայիսի 15-ին Բերդ-Երեւան ավտոճանապարհի 6-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Վեկտրա» մակնիշի 13 LL 517 պետհամարանիշով եւ «ՎԱԶ-2106» մակնիշի 57 SO 003 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով «ՎԱԶ-2106» ավտոմեքենայի վարորդ, 1975 թ. ծնված Վ. Սմբատյանը եւ ուղեւոր, 1975 թ. ծնված Կ. Վարդանյանը ստացել են տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Բերդի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է:

Այդ օրը մեկ այլ ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 71-րդ կմ-ին. «ՎԱԶ-2106» մակնիշի SS 0056 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկի մասից եւ շրջվել:

Պատահարի հետեւանքով վարորդ՝ 1976 թ. ծնված Դավիթ Արսենյանը եւ ուղեւոր, 1980 թ. ծնված Գեորգ Գասպարյանը

նը ստացած տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Թալինի հիվանդանոց:

Տուժածները, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս են գրվել հիվանդանոցից:

Մայիսի 15-ին, ժամը 18.27-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Ռուսթավելու փողոցի 17 շենքին հարակից տարածքում:

Պարզվել է, որ իրար են բախվել «ՎԱԶ-21010» մակնիշի 01 SS 515 պետհամարանիշով եւ «ԳԱԶ-3110» մակնիշի 311 LL 01 պետհամարանիշով ավտոմեքենաները, ինչի հետեւանքով զոհվել է մեկ եւ տուժել հինգ մարդ:

Վառելիքի արտահոսքի հետեւանքով առաջացած հնարավոր հրդեհի սպառնալիքը վերացվել է:

Մայիսի 16-ին Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 152-րդ կմ-ին «Վոլվո» մակնիշի ՏՀՌ-8649516 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան շրջադարձի ժամանակ շուռ է եկել եւ ընկել Արփա գետը: Ավտոմեքենան բեռնված է եղել լուծվող սոդայով:

Ավտոկռուկների օգնությամբ ավտոմեքենան դուրս է բերվել գետից: Բեռնատարի ողջ պարունակությունը թափվել է Արփա գետը, ինչի հետեւանքով սատկել են մեծ քանակությամբ ձկներ:

Վարորդը (Իրանի քաղաքացի) միջին ծանրության վիճակում տեղափոխվել է Վայքի հիվանդանոց:

Մայիսի 18-ին Աշտարակի Երեւանյան փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-2106» մակնիշի 21 US 565 պետհամարանիշով եւ «ԲՄՎ» մակնիշի ՎիՅուՎի-694 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով «ՎԱԶ-2106» մեքենայի ուղեւոր՝ 1956 թ. ծնված Մարինե Սապոնջյանը տեղում մահացել է, իսկ վարորդ, 1950 թ. ծնված Լեւոն եւ ուղեւոր, 1979 թ. ծնված Մայա Սապոնջյանները տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Աշտարակի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը գնահատվում է բավարար:

Մայիսի 20-ին Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 54-րդ կմ-ին «Իսուզու» մակնիշի 14 SU 623 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել հանդիպակաց երթեւեկի գոտի՝ բախվելով «ԶԻԼ-130» մակնիշի 58 SU 057 պետհամարանիշով ավտոմեքենային:

Պատահարի հետեւանքով «ԶԻԼ-130»-ի ուղեւոր, 1955 թ. ծնված Գ. Գոդյանը տեղում զոհվել է:

Մայիսի 21-ին, ժամը 09.15-ին ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզի Աշոց գյուղի Սարալանջ թաղամասի մոտ տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին պատկանող «ԳԱԶ-66» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհից եւ շրջվել, ինչի հետեւանքով առաջացել է զազի արտահոսք:

Տեղում պարզվել է, որ արտահոսքի պատճառը բացված փական է:

Փլուզումներ

Մայիսի 16-ին, ժամը 19.35-ի սահմաններում Գյումրիի Լազոյի փողոցի 15 տանը տեղի է ունեցել փլուզում:

Պարզվել է, որ ինքնափլուզվել է

Մ. Բաղդասարյանի տան խոհանոցի՝ 6 քմ մակերեսով արտաքին պատը:

Մայիսի 20-ին, ժամը 11.20-ին տեղեկություն է ստացվել Գյումրիի Սեւյան փողոցի 8 հասցեում գտնվող առեւտրի արդյունաբերական պահեստում տեղի ունեցած փլուզման մասին:

Պարզվել է, որ ժամը 03.00-ի սահմաններում փլուզվել են երկհարկանի շենքի՝ 40 քմ մակերեսով արեւելյան հատվածը եւ 8 քմ մակերեսով հարակից պարիսպը:

Ծառն ընկել է ավտոմեքենաների վրա

Մայիսի 20-ին, ժամը 03.40-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Նալբանդյան փողոցի 21 շենքին հարակից տարածքում ծառն ընկել է ավտոմեքենաների վրա, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները ծառը մասնատել են եւ հեռացրել:

Պատահարի հետեւանքով վնասվել են «ՎԱԶ-2106» մակնիշի 01 ՍՍ 793 պետհամարանիշով եւ 62 ՏՏ 396 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Կարկուտ

Մայիսի 16-21-ը ընկած ժամանակահատվածում Վայոց ձորի մարզի Գոմք, Արտավան, Թառաթունք, Զորս, Քարագլուխ, Աղջաձոր եւ Ելփին գյուղերում տեղացած կարկուտի հետեւանքով վնասվել են պտղատու ծառեր եւ ցանքատարածքներ:

Մարզի Զորքատեղ գյուղում տեղացած ուժեղ կարկուտը, որն առաջացրել է 5 սմ կարկտաշերտ, մեծ վնաս է հասցրել գյուղի պտղատու ծառերին, բանջարաբուստանա-



Պայթել է նավթամուղը

Մայիսի 15-ին Նիգերիայի Լագոս քաղաքի մերձակայքում նավթամուղի պայթյունի հետեւանքով զոհվել է մոտ հարյուր մարդ:

Ըստ ոստիկանության ներկայացուցիչների՝ ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ ծանր տեխնիկան վնասել է նավթամուղը, ինչի հետեւանքով տեղի է ունեցել պայթյուն: Լագոսի Իջեգուն արվարձանի մի քանի բնակելի թաղամաս հայտնվել է կրակի ճիրաններում: Տարբեր աստիճանների այրվածքներով 36 տուժած տեղափոխվել է հիվանդանոց:

Հարուցվել է քրեական գործ:

Ընկել է կիրճը

Առնվազն 24 մարդ զոհվել է 20-ը ստացել են վնասվածքներ մայիսի 19-ին Մեքսիկայի Իդալգո նահանգում տեղի ունեցած ավտոպատահարի հետեւանքով: Ըստ տեղական իշխանությունների՝ դեռեւս չպարզված հանգամանքներում ավտոբուսը դուրս է եկել լեռնային ճանապարհից եւ ընկել կիրճը: Նախնական վարկածով՝ վթարի պատճառն ընթացքի ժամանակ պայթած անվաղողն է:

Մայիսի 21-ին ավտոբուսի մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել Արգենտինայի Սան Միգել դել Մոնտե քաղաքի մերձակայքում: Դեռեւս չպարզված հանգամանքներում ուղեւորներով լի ավտոբուսը դար-

ծել է անկառավարելի, դուրս եկել ճանապարհից եւ շրջվել: Պատահարի հետեւանքով զոհվել է յոթ մարդ: Զոհերի թիվը դեռ կարող է աճել. տարբեր աստիճանների վնասվածքներով 25 մարդ տեղափոխվել է հիվանդանոց: Նախնական տվյալներով՝ ավտոբուսի վարորդը չի կարողացել կառավարել մեքենան հորդառատ անձրեւի եւ փոթորկային քամու պատճառով:

Բենզատարը բախվել է ավտոմեքենաների շարասյանը

Հինգշաբթի գիշերը Նիգերիայի հյուսիսում երկրի զինված ուժերի ավտոմեքենաների շարասյանը բախվել է մի բենզատար: Բռնկված հրդեհի հետեւանքով ող-



ջակիզվել է առնվազն 45 զինծառայող, տասնյակ մարդիկ ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ:

Վթարի պատճառները ճշտվում են:

Պայթյուն բնակելի շենքում

Մայիսի 22-ին, առավոտյան ժամը 9-ի սահմաններում պայթյուն է տեղի ունեցել



Ռուսաստանի Ղաշնույան Եկատերինբուրգ քաղաքի բնակելի շենքերից մեկում: Պայթյունի եւ դրան հաջորդած հրդեհի զոհ է դարձել չորս մարդ:

Ինը հարկանի շենքի չորրորդ հարկում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով վնասվել են միայն բնակարաններից մեկի պատերը: Մուտքի բնակչությունը տարահանվել է:

Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության հայտարարության՝ պատահարի պատճառը կենցաղային գազի պայթյունը չէ: Պայթած բնակարանում հայտնաբերված դիակներից մեկի վրա առկա են բռնության հետքեր:

Պայթյունի պատճառները ճշտվում են:

Փլվել է կառուցվող կամուրջը

Չորեքշաբթի օրը Շվեդիայում փլվել է կառուցվող երկաթուղային կամրջի մի հատվածը: Պատահարի հետեւանքով զոհվել է մեկ եւ վնասվածքներ ստացել չորս մարդ: Բոլոր տուժածները շինարարներ են:

Կամրջի փլուզման պատճառները ճշտվում են:

Հրդեհ համերգի ժամանակ

Երեքշաբթի օրը հրդեհ է բռնկվել Բեռլինի ֆիլիարմոնիայում: Ինչպես պարզել է հետաքննությունը, համերգի ժամանակ



բռնկված հրդեհի պատճառը շենքի տանիքում իրականացվող զոդման աշխատանքներն էին:

Հրդեհաշիջմանը մասնակցել է 120 հրշեջ: Զոհեր եւ տուժածներ չկան: Շենքին հասցված վնասի պատճառով հետաձգվել են առաջիկա բոլոր համերգները:

Տախնա Ծյունիբարյան

➔ յին կուլտուրաներին եւ խոտ-հարբերին:

Մայիսի 20-ին, ժամը 16.00-ից Ապարանում եւ Լուսազյուղ համայնքում 15 րո-



պեում տեղացել է մոտ 10 մմ տրամագծով կարկուտ: Որոշ հատվածներում կարկուտի շերտը հասել է 9 սմ-ի:

Վնասի չափերը ճշտվում են: Նույն օրը ժամը 20.30-ից 21.30-ն ընկած ժամանակահատվածում տեղացած ուժեղ կարկուտը մեծ վնաս է հասցրել նաեւ Սյունիքի մարզի Տեղ, Կոռնիձոր եւ Արավուս գյուղերին:

Վնասի չափերը պարզելու նպատակով համայնքներում ստեղծվել են հանձնաժողովներ:

Հրդեհներ

Անցած շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի 18 դեպք:

Անարվեստ հրդեհ

Մայիսի 17-ին, ժամը 14.19-ին ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզի Քասախ գյուղի արվեստի դպրոցի 2-րդ հարկում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 14.58-ին: Դպրոցի մի սենյակում այրվել են մեկ բազմոց, երկու բազկաթոռ եւ մեկ նկար:

Ավտոտնակում

Մայիսի 17-ին հրդեհ է բռնկվել Արովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի 23 շենքի բակում: Այրվել է Վ. Սարգսյանին պատկանող՝ 18 քմ մակերեսով ավտոտնակը:

Ավտոտնակում ամբողջությամբ այրվել է «ԳԱԶ-24» մակնիշի 59 LO 045 պետհամարանիշով ավտոմեքենան:

Վ. Սարգսյանը դեմքի եւ ձեռքերի այրվածքներով տեղափոխվել է Արովյանի հիվանդանոց:

Գազալցակայանում

Մայիսի 19-ին, ժամը 21.29-ին ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Բերդ-Արծվաբերդ ավտոճանապարհի 17-րդ կմ-ին գտնվող գազալցակայանում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.00-ին, մարվել՝ 24.00-ին:

Այրվել է Ս. Ասրյանին պատկանող գազալցակայանի գազամուղի սենյակը՝ 36 քմ մակերեսով:

Հրդեհի հետեւանքով գազալցակայանի աշխատակից Վ. Ասրյանը տարբեր աստիճանների այրվածքներով տեղափոխվել է Բերդի հիվանդանոց:

Օղոտն ու կառուցվածքները

Մայիսի 21-ին, ժամը 15.04-ին հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Փանիկ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 17.00-ին:

Այրվել են Ա. Բաղդասարյանին պատկանող տան բակում կուտակած 120 հակ ծղոտը եւ ծածկի՝ 26 քմ մակերեսով փայտյա կառուցվածքները:

Տանիքն ու կտորեղենը

Մայիսի 21-ին Երեւանի Դավթաշեն համայնքի 7-րդ փողոցի 12 տանը բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են տանիքը եւ այնտեղ կուտակած կտորեղենը:

ԼՂ ՓԾ լրատվական կենտրոն

Հրդեհներ

Մայիսի 15-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Ազատամարտիկների 24 հասցեում: Այրվել է էլեկտրավահանակի մալուխը:

Մայիսի 21-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Կոռնոլուս գյուղի տներին մեծ վնաս է հասցրել: Հրդեհի հետեւանքով տուճն ամբողջությամբ այրվել է:

Հրդեհաշիջման ժամանակ հայտնաբերվել է տանտիրուհու՝ 1935 թ. ծնված Լ. Գրիգորյանի դիակը:

Չենք-զինամբերը

Մայիսի 15-ին Ասկերանի մերձակայքում հայտնաբերվել են 100 մմ-ոց թնդանոթի արկ եւ F-1 տիպի 3 նռնակ: Հայտնաբերված զինամբերը վնասագերծվել է:

Մայիսի 20-ին, ըստ Մարտունու շրջանի բնակչության եւ տարածքների պաշտպանության բաժնի պետի տեղեկատվության՝ հակահետեւակային ակամի ակամագերծման ժամանակ ձեռքի եւ ներքին օրգանների բեկորային վնասվածքներ է ստացել Ստեփանակերտի բնակիչ, «Halo Trust» կազմակերպության սակրավոր, 1979 թ. ծնված Ս. Խաչատրյանը, որը տեղափոխվել է Մարտունու շրջանային հիվանդանոց:

Տուժածի առողջական վիճակը բավարար է:

Ավտոպատահար

Մայիսի 19-ին Ականաբերդ-Մարտակերտ ճանապարհահատվածում վթար է ենթարկվել «Միցուբիշի Պաջերո» մակնիշի 14 ՕՍ 014 պետհամարանիշով ավտոմեքենան, որը, կորցնելով կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթուղուց մասից եւ ընկել ձորը:

Ավտոմեքենայում գտնվող 4 հոգին, տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մարտակերտի շրջանային հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների կյանքին վտանգ չի սպառնում:


Փրկարար ծառայության արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման փրկարարները մեքենան դուրս են բերել ձորից:

Վերելակի խափանում

Մայիսի 16-ին եւ 21-ին Ստեփանակերտի Մաշտոցի փողոցի 7 շենքից ահագանգ է ստացվել, որ վերելակը խափանվել է եւ մեջը մարդիկ են մնացել:

Երկու դեպքում էլ փրկարարների կողմից ցույց է տրվել անհրաժեշտ օգնություն:

Նաիրա Եղիազարյան



Մայիսի 15-21-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են երեք երկրաշարժ: Մայիսի 15-ին 3 բալանոց սեյսմիկ ցնցում է տեղի ունեցել Կրաստան-Հայաստան սահմանային գոտում, Բավրա քաղաքից 15 կմ հյուսիս-արեւմուտք: Երեք բալ ուժգնությամբ երկրաշարժեր են գրանցվել մայիսի 18-ին Հայաստանում, Քաջարան քաղաքից 27 կմ արեւելք եւ Բավրա քաղաքից 7 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցվել:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երկու ուժեղ երկրաշարժ: Մայիսի 19-ին 6 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Ինդոնեզիայում, Սումատրա կղզու Սիբու-

զա քաղաքից 40 կմ արեւելք: Երկրաշարժը ցունամի չի առաջացրել, տուժածներ եւ ավերածություններ չկան: Մայիսի 20-ին Այասկայի Ալեուտյան կղզիների շրջակայքում գրանցվել է 6,3 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը տեղի է ունեցել բնակավայրերից մեծ հեռավորության վրա: Նշենք, որ ըստ պաշտոնական տվյալների, մայիսի 12-ին Չինաստանի Սիչուան նահանգում գրանցված ավերիչ երկրաշարժի հետեւանքով զոհվել է 40 հազարից ավելի մարդ, մոտ 70 հազարը մնացել է փլատակներում: Տեղական իշխանությունները 5 մլն. անօթեւան դարձած մարդկանց տրամադրել են ժամանակավոր կացարաններ: Հիմնական վնասը հասել է Սիչուան, մասամբ՝ Հանսյու, Շենսի, Յունյան եւ Չունցին նահանգներին:

ՍՊԱԾ գործակալություն



Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2917 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 345 մարդ: Եղել է մանկական 125 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 48 երեխա:

Գրանցվել են 45 մահ եւ 24 դժբախտ պատահար:

Մայիսի 15
Պռոշյան փողոցում «Նաիրի» բժշկական կենտրոնի դիմաց տեղի ունեցած վթարից տուժել է 5 մարդ, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են մայրաքաղաքի տարբեր հիվանդանոցներ, իսկ Դավիթաշենի կամրջի մոտ վթարի ենթարկված 50-ամյա Ս. Նիկողոսյանը բազմակի վնասվածքներով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Շտապօգնության աշխատակիցները երակների կտրվածքով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխել 20-ամյա Յ. Ա.-ին:

Մայիսի 16
Քանաքեռում եւ Մալաթիայի շուկայի մոտ տեղի ունեցած վթարների հետեւանքով տուժել են եւ տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն տեղափոխվել 61-ամյա Ս. Մանուկյանը եւ 36-ամյա Ա. Բեգջանյանը:

Մայիսի 17
Նոր Նորքի 2-րդ զանգվածում դանակահարման հետեւանքով ստացած մարմնական վերքերով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխվել 20-ամյա Ս. Գալստյանը, 32-ամյա Ա.

Դանիելյանը եւ 21-ամյա Ա. Գրիգորյանը: Սնկից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա Վ. Դանիելյանը:

Թիվ 1 համալսարանական հիվանդանոցի մոտ տեղի ունեցած վթարի հետեւանքով 26-ամյա Գ. Ղազանչյանը ստացել է ուղեղի ցնցում եւ տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն:


Մայիսի 18
Բազմակի վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Հալաբյան փողոցում վրաերթի ենթարկված 41-ամյա Ա. Կարդեղյանը եւ 37-ամյա Գ. Ղազարյանը:

Սնկից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 50-ամյա Ռ. Սարգսյանը:

Մայիսի 20
Դեղորայքային եւ ժավելի սպրիտից թունավորումով թիվ 2 համալսարանական հիվանդանոց են տեղափոխվել Արարատյան 2-րդ զանգվածի 14 շենքի բնակիչ, 9-ամյա Է. Հովհաննիսյանը եւ Հարավարեւմտյան Բ-4 թաղամասի Բարաջանյան փողոցի 26 շենքի բնակիչ, 7-ամյա Վ. Եղիազարյանը:

Գլխկայի փողոցի 21 տանը էլեկտրահարվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ թիվ 6 կլինիկական հիվանդանոց է տեղափոխվել 24-ամյա Կ. Հավատյանը:

Մայիսի 21
Արգավանդի խճուղում տեղի ունեցած վթարի հետեւանքով տուժել է 5 մարդ: Տուժածները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Երեւանի տարբեր բժշկական կենտրոններ:



Մայիսի 15-16-ը, 18-ին, 21-ին առանձին շրջաններում, 17-ին, 19-20-ը շրջանների մեծ մասում դիտվել են անձրեւ եւ ամպրոպ՝ 1-17 մմ (Ապարանում՝ 28 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +25...+30, Արարատյան դաշտում՝ +23...+28, Տավուշում՝ +21...+26, Լոռիում եւ Արցախում՝ +19...+24, Սյունիքի նախալեռներում եւ Լեռնային շրջաններում՝ +14...+19 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ +1...+6 (Աշոցք՝ -1), Տավուշում եւ Սյունիքի

նախալեռներում՝ +4...+9, Արարատյան դաշտում՝ +8...+13, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +10...+15°C:

Մայիսի 23-25-ը սպասվում է առանց տեղումների եղանակ, 26-ին օրվա երկրորդ կեսին տեղ-տեղ, 27-ին՝ առանձին շրջաններում սպասվում են կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, տեղ-տեղ՝ կարկուտ: Քամին հարավ-արեւմտյան՝ 3-8 մ/վրկ, ամպրոպի ժամանակ հնարավոր է ուժգնացում 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 23-25-ին աստիճանաբար կբարձրանա 2-3, 26-ի ցերեկը, 27-ին կնվազի 4-5 աստիճանով:

«Արտակարգ թերթ» ցավակցություն է հայտնում «Բլից Մեդիա» ՍՊԸ տնօրեն Արմեն Դավթյանին՝ սիրելի մոր մահվան կապակցությամբ:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ուղերձը

Հեռահաղորդակցության եւ տեղեկատվական հասարակության համաշխարհային օրվա կապակցությամբ



Եթե մարդիկ ավելի շատ մտածեին այն մասին, որ գիտելիքը փրկություն է, ամբողջ առափնյաի չնչին մասն էլ չէր լինի. մարդկային ողջ դժբախտությունը անգիտության կամ զգիտության հետեւանք է:

Ազի-Յոզա

իրատապ խնդիրների լուծում: Հեռահաղորդակցության եւ տեղեկատվական հասարակության համաշխարհային օրն ազդարարում է հասարակությունների հեռահաղորդակցության եւ տեղեկատվության հնարավորությունն ու փոխանակման դերը, ինչպես նաեւ հաղորդակցվելու եւ համագործակցելու համընդհանուր անհրաժեշտությունը:

1985 թ. այս օրն է նաեւ հիմնադրվել Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ՀՄՄ): Այդ ժամանակ էլեկտրոնային նշանները հաղորդակցության փոխանցելու գաղափարն արդեն տեխնոլոգիաների զարգացման համար կարելի էր խթանել: ՀՄՄ-ը հիմնվել է, որպեսզի

լուծի միջազգային ստանդարտների աճող պահանջը: Այդ օրերից ի վեր ՀՄՄ-ը հիմնարար դեր է խաղացել աշխարհը միավորելու գործում. մարտահրավեր, որն այսօր էլ շարունակվում է 3-րդ սերնդի բջջայինների եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգնությամբ:

Սակայն հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունը դեռեւս համընդհանուր չէ, դրա օգուտները դեռ հավասարապես չեն բաշխվել: Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովները, որոնք տեղի են ունեցել 2003 թ. ժնեյում եւ 2005 թ. Թունիսում, տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաները

կապեցին մարդկային զարգացման հետ եւ կոչ արեցին անդամ-երկրներին՝ տեղեկատվությունն ու գիտելիքը փոխանցելով կառուցել համընդհանուր «ներառական, մարդուն եւ զարգացմանը միտված տեղեկատվական հասարակություն»:

Գագաթաժողովներն անդամ-երկրներին նաեւ կոչ արեցին անդրադառնալ սահմանափակ կարողություններով անձանց եւ այլ խոցելի խմբերի հատուկ պահանջներին: Այս տարվա թեման, «համախմբելով սահմանափակ կարողություններով անձանց», ընդգծում է ՀՄՄ սարքավորումներն ու ծառայությունները հասանելի դարձնելու կարելիությունը՝ սահմանափակ կարողություններով անձանց կարիքները հոգալու նպատակով: Աշխարհում կա մոտավորապես 650 միլիոն սահմանափակ կարողություններով անձ: Իրենց ընտանիքների հետ միասին հաշվվում է մոտ 2 միլիարդ մարդ՝ աշխարհի բնակչության 30 տոկոսը, որոնք ապրում են սահմանափակ կարողություններով: Կարելի է հիշել, որ յուրաքանչյուր ոք ցանկացած պահի կարող է դառնալ հաշմանդամ:

Կարելի է փոխել մեր վերաբերմունքն ու մոտեցումը սահմանափակ կարողություններով

մարդկանց հանդեպ՝ երաշխավորելով, որ բոլոր հիմնարար իրավունքներն ու ազատությունները հարգված են՝ ներառյալ տեղեկատվական հասարակության մեջ ներգրավվելու եւ հաշմանդամների ներդրումները, գաղափարներն ու ջանքերն առաջ քաշելու իրավունքը:

Սա զարգացման նշանակալի մարտահրավեր է: Բայց մենք պետք է գտնենք նորարարական լուծումներ, այդ թվում՝ նոր օժանդակ տեխնոլոգիաների զարգացում, եւ նպաստենք ՀՄՄ մատչելիության տարածմանը: Ես հորդորում եմ քաղաքական գործիչներին եւ արդյունաբերողներին՝ արագացնել գիտական եւ տեխնիկական հետազոտությունները, նպատակ ունենալով զարգացնել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կլինեն կիրառելի եւ հասանելի բոլորի համար:

Այսօր եկեք խոստանանք հետեւել «Սահմանափակ կարողություններով անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի ուղեւոր սկզբունքներին եւ միասին աշխատենք, որպեսզի ամբողջ մարդկությունը հավասարապես օգտվի ներկա, ինչպես նաեւ մշտապես փոփոխվող մեր աշխարհում դեռեւս առկա հնարավորություններից:

Մայիսի 22-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության նիստ, որը վարել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Կառավարության որոշմամբ, ՀՀ կառավարության 2008 թ. պահուստային ֆոնդի հաշվին, 6 մլն դրամ է հատկացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությանը՝ Երեւան քաղաքի Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի տեղափոխման եւ չեզոքացման նախապատրաստական աշխատանքների իրականացման համար:

Թունաքիմիկատների գերեզմանոցը կառուցվել է 1970-ական թվականներին, Երեւան քաղաքի Էրեբունի թաղային համայնքի տարածքում, Ջրաշեն, Գեղանիստ եւ Մուշավան գյուղերի հարեւանությամբ, ակտիվ սողանքային գոտում: Այստեղ թաղված է շուրջ 500 տոննա թունաքիմիկատ, հիմնականում ԴԴՏ: Թաղված են նաեւ արսեն, ծծումբ եւ սնդիկ պարունակող թունաքիմիկատներ:

Թունաքիմիկատների գերեզմանոցը չունի հատակ, պատեր եւ տանիք, թունաքիմիկատներն անմիջականորեն թաղված են հողի մեջ: Տեղանքի երկարությունը 100 մ է, լայնությունը՝ 20 մ, խորությունը հինգ մետրից պակաս, մոտավոր ծավալը կազմում է 10 հազար խորանարդ մետր:

Սողանքային պրոցեսների շարունակման եւ բնակավայրերին մոտ գտնվելու պատճառով այսօր իրատապ անհրաժեշտություն է դարձել թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատները տեղափոխել եւ վնասագերծել, իսկ գերեզմանոցի տարածքը վարակազերծել:

Հայաստանի Հանրապետությունում չկան թունաքիմիկատների ոչնչացման համար նախատեսված գործարաններ կամ տեխնոլոգիական գծեր: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թունաքիմիկատների ոչնչացման աշխատանքները բավական ծախսատար, էներգատար եւ բնապահ-

ՆԱՅԻՆԱՅԻՆ ՄԱՍԻՆ

• «Ո՛րքա՞նք են ՄԱՍԻՆԻՆՆԵՐԸ»



պանակալ խնդիրներ հարուցող գործընթաց է: Մեկ կիլոգրամ թունաքիմիկատի ոչնչացումը 2007 թ. գներով արժեք 3-5 ԱՄՆ դոլար: Թունաքիմիկատների ոչնչացման գործընթացը կրում է մշտական բնույթ, ինչը պայմանավորված է թունաքիմիկատների օգտագործման անընդհատությամբ: Այդ իսկ պատճառով մշտապես կոյտանան թունաքիմիկատների ոչնչացման ենթակա քանակներ:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի խնդիրներից մեկն էլ այն է, որ տարաբնույթ թունաքիմիկատներ առանց տեսակավորման թաղվել են, լցվելով մեկը մյուսի վրա, իսկ սողանքային պրոցեսը պատճառ է դարձել թունաքիմիկատների լրացուցիչ խառնվելուն: 2004

թվականին կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թունաքիմիկատների փաթեթները քայքայվել են: Չի իրականացվել նաեւ թունաքիմիկատների թաղման ժամանակ նախատեսված կոնտեյներացումը:

Թունաքիմիկատների գերեզմանոցում տեղի են ունենում քիմիական ռեակցիաներ, որի հետեւանքով անջատվում են քլոր պարունակող գազային միացություններ, կա ֆոզգեն գազի անջատման վտանգ: Քիմիկատների տեղափոխման աշխատանքները պետք է կատարվեն անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (չնչառական ուղիների եւ մաշկի պաշտպանություն):

Թունաքիմիկատների արտաբերման

եւ տեղափոխման համար անհրաժեշտ է կառուցել ավտոճանապարհ ծանր տեխնիկայի համար եւ աշխատանքային հարթակ, ինչպես նաեւ թունաքիմիկատների տեղափոխման աշխատանքներն իրականացնելիս անձնակազմի եւ տեխնիկայի համար նախատեսվել սանիտարական մշակման, բժշկական հսկողության իրականացման կետեր: Ապահովել աշխատանքներն իրականացնող աշխատակիցների առողջական վիճակի նկատմամբ մշտական հսկողություն:

Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի իրամանով ստեղծվել է թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի մոնիտորինգի իրականացման խումբ, որը պետք է մշտական հսկողության տակ պահի գերեզմանոցի տարածքը, բնակչության եւ տարածքների պաշտպանության վարչության կողմից ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում են ներկայացուցիչներ ՀՀ բնապահպանության եւ քաղաքաշինության նախարարություններից, Երեւանի քաղաքապետարանից եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից: Անկացվել են քննակումներ թունաքիմիկատների գերեզմանոցի ոչնչացման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Հետագայում անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել թունաքիմիկատների ոչնչացման ուղղությամբ միջազգային փորձը, կապեր հաստատել համանման աշխատանքներ իրականացնող ընկերությունների եւ կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ ճշտել Հայաստանի տարածքում թունաքիմիկատների ոչնչացման ձեռնարկության ստեղծման հնարավորությունները, քանի որ թունաքիմիկատների կուտակումն անընդհատ գործընթաց է:

Կ. Կարապետյան
ՀԾԾ ԲՏԴԿ տեխնաժին վթարների,
հակաքիմիական եւ
հակաճառագայթային
պաշտպանության բաժնի պետ,
փ/ծ մայրո

Արտակարգ իրավիճակները ժամանցի վայրերում

Մինչև 31 Դեկտեմբեր,
Մինչև 31 Դեկտեմբեր

2006 թ. սեպտեմբերին Ուկրաինայի Խմելնիցկի շրջանում «Վազոլ Եդմիկ» կոչվող կամրջի վրա, տեղի է ունենում մի դժբախտ պատահար: Հայտնի բեմադրված անվտանգ ատրակցիոնը դառնում է մի աղջկա մահվան պատճառ: Այս ատրակցիոնը մարդկանց հնարավորություն է տալիս վայելել ազատ անկման բոլոր հաճելի և տհաճ զգացողությունները: Դրա համար ռետինե ամուր պարանի մի ծայրը կապում են մարդու ոտքերից, իսկ մյուսը՝ կամրջից, այնուհետև մարդը մեծ բարձրությունից «հանգիստ» նետվում է ցած:



Ատրակցիոնում 75կմ/ժ արագությամբ սլաքող սայլակները հերթական բլրակից իջնելիս բախվում են մետաղե ձողերին: Դրա հետևանքով մի կին գոհվում է, մի մարդ ստանում ծանր, 30-ից ավելի՝ տարբեր աստիճանների վնասվածքներ: Ընդ որում՝ տուժում են ոչ միայն այդ պահին ատրակցիոնի սայլակներում գտնվող մարդիկ, այլև՝ այգու մյուս այցելուներին:

աշխատող դերասաններից էր: Եթե կարելի է այդպես արտահայտվել, ապա նա այգու Սարսափների սենյակում Սատանա էր աշխատում: «Ես այնտեղից դուրս եկա եւ իմ տեսողաշտում միանգամից հայտնվեց «Սատանայի անվից» կախված պատանի,- պատմում է Պերեյրան,- դրանից հետո ես արդեն բնագրաբար նետվեցի օգնության: Ժամանակին ակորբատ եմ եղել եւ ինձ մոտ համապատասխան հանդերձանք ունեի: Բարձրացա վերեւ եւ օգնեցի տղային նորից մտնել անվից կախված զամբյուղի մեջ»:

Մի քանի տարի առաջ Հնդկաստանի հարավային Թամիլնադ նահանգում փուլ եկած «Սատանայի անվից» դարձավ 11 մարդու մահվան պատճառ: Ժամանցային այգու տեղի ունեցած աղետի հետևանքով տարբեր վնասվածքներ էր ստացել 26 մարդ: Անվից շրջվում է ուժեղ քամու պատճառով: Պատահարը տեղի է ունենում հնդկական ամենամյա փառատոնի ժամանակ, որին շուրջ 5000 մարդ էր մասնակցում:

Ամառային մի կիրակի Ռուսաստանի Իվանո-Ֆրանկովյան շրջանում քիչ էր մնում մռայլվեր մի սարսափելի պատահարով: Կալուզայի մշակույթի այգու գործող հսկա դիտանիվի զամբյուղներից մեկը համարյա մազից էր կախված: Իսկ դրա մեջ երեք փոքր երեխա կար եւ երկու մեծահասակ: «Երբ զամբյուղը հայտնվեց դիտանիվի ամենաբարձր կետում՝ 27 մետր բարձրության վրա, այն հանկարծակի պոկվեց ու կախվեց տառապանքի մի «թելից»,- հետագայում պատմում էր Վլադիմիր Ռոմանովը, որն այնտեղ գտնվող երեխաների հայրն էր,- մենք սարսափելի վախեցանք: Կարծեցի՝ վերջ, հիմա զամբյուղը կընկնի ներքեւ ու...»:

Կարուսելի հսկիչը, դա նկատելով, անվից կանգնեցնում է եւ փորձում այն պտտել հակառակ ուղղությամբ: Վայրկյաններ անց զամբյուղի հատակը կառչում է անվի ծաղերից, իսկ հետո սկսում ուժեղ ցնցվել ու պտտվել: Բարեբախտաբար, այգու աշխատակիցներին հաջողվում է դիտանիվը դանդաղ պտտելով զամբյուղում գտնվող անվտանգ իջեցնել գետնին:

Այս դեպքից մեկ տարի առաջ Քաղաքի օրվան նվիրված տոնական միջոցառումների ժամանակ անվի կառույտի արագությունն անսպասելիորեն սկսում է ավելանալ: Հսկիչն այն կարողանում է կանգնեցնել միայն երրորդ արագընթաց պտույտից հետո: Այգու տնօրենի մեկնաբանությամբ՝ դիտանիվը չի կարող աշխատել անձրեւի պայմաններում: Իսկ այդ օրն ուժեղ անձրեւ է գալիս եւ իրենք չեն հասցնում անվի կանգնեցնել ու մարդկանց զամբյուղներից իջեցնել:

Իմիջիայլոց, դա այգու ամենամոտ կարուսելն էր, որը տեղադրվել էր 1992 թվականին, իսկ մյուսները գործում էին 1971-ից:

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

2007 թ. ամռանը Փարիզի մերձակայքում գտնվող փոքրիկ Սեն ժերմեն ան Լայ քաղաքում կազմակերպվել էր հերթական, ամենամյա տոնավաճառը: Օգոստոսի 4-ին տեղի ունեցած պատահարը խլում է 48-ամյա հոր եւ 21-ամյա որդու կյանքը: Տոնավաճառի եւս երկու այցելու ծանր վնասվածքներով տեղափոխվում են հիվանդանոց: Դեպքը տեղի է ունենում «Քուսթեր» կոչվող ատրակցիոնում, որը նման էր մարդկային երկու

ծեռքով պահվող հսկա ճոճանակի: Այն հանկարծակի օդում «կախվում է» եւ միջից երկու մարդ ընկնում են ներքեւ: Մյուսները հայտնվում են գետնից 36 մետր բարձրության վրա գտնվող վտանգավոր թակարդում, որտեղից նրանց կարողանում են ներքեւ իջեցնել միայն փրկարարները:

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

2006 թ. հուլիսին արտակարգ պատահար է տեղի ունենում Ռուսաստանի Կուրսկի մարզում: Երմոշկինյան լճի հանգստյան գոտում տեղադրված բատուտի վրա մի քանի երեխա էին թռվում՝ երկու տղա եւ մի աղջիկ: Անսպասելիորեն բարձրացած ուժեղ քամին պո



կում է այն պարանները, որոնցով բատուտն ամրացված էր գետնի մեջ խրված մետաղե ձողերին:

Ականատեսները պատմում էին, որ քամին փչովի ատրակցիոնը, երեխաների հետ բարձրացրեց վեր ու շարժեց մի քանի մետր հեռու: Աղջկն ընկնում է ավտոմեքենայի վրա, տղաներից մեկը՝ հարակից տաղավարի տանիքին: Ամենաշատը տուժում է 3-ամյա մի փոքրիկ, որն ընկնում է գետնին՝ ասֆալտի վրա: Մեկ օր անց բազմաթիվ կոտրվածքներ ու զանգուղեղի լուրջ վնասվածք ստացած երեխան հիվանդանոցում մահանում է:

2007 թ. ամռանը ՌԴ Չիտայի մարզում կրկին բատուտի հետ կապված պատահարի հետևանքով գոհվում է մի 4-ամյա աղջնակ, իսկ վեց երեխա ստանում են տարբեր աստիճանների վնասվածքներ:

Այս անգամ ատրակցիոնը տեղադրված էր տեղի հանրակրթական դպրոցներից մեկի բակում: Ուժեղ քամու հետևանքով բատուտը պահող պարանները պոկվում են, եւ այն, ներսում գտնվող երեխաներով հանդերձ, բարձրանում է օդ: Շուրջ 30 մետր թռչելուց հետո բատուտը բախվում է ավտոտնակի աղյուսե պատին եւ ընկնում գետնին:

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

Երկու տարի առաջ Ռուսաստանի Եկատերինբուրգ քաղաքի «Լիմպոպո» ակվապարկում մի այցելու դեպի լողավազան սահելիս կոտրում է ոտքը: Ջրային զվարճանքների սիրահար 40-ամյա տղամարդը ոտքը երկու տեղից կոտրում է եւ տեղափոխվում հիվանդանոց: Ժամանցային համալիրի տնօրենությունը գերադասում է հարցը լուծել խաղաղ ճանապարհով եւ այցելուի բուժման ծախսերը վերցնում է իր վրա: Չնայած տուժողն իր մեղքով էր վնասվածքներ ստացել, քանի որ չէր պահպանել ակվապարկում սահմանված անվտանգության կանոնները եւ փրկարարների հրահանգները, որոնց մասին հիշեցումները փակցված են լողավազանի շուրջը լուրջ՝ աչքի ընկնող տեղերում:

Պատրաստեց
Գոհար Բաղդասարյանը

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

Սանկտ Պետերբուրգի կենտրոնական զբոսայգում գտնվող «Յոթերորդ երկինք» ատրակցիոնը մեծ համբավ ունեւր քաղաքի բնակիչների շրջանում: Եթե մյուս կարուսելները նույնիսկ հանգստյան օրերին սակավ այցելուներ էին ունենում, ապա «Յոթերորդ երկինքում» գտնվել ցանկացողների հերթը միշտ բազմամարդ էր:

Ուղմուրտիայում բնակվող 18-ամյա Միխայիլ Կվակիմին ընկերները վաղուց էին պատմել այս ատրակցիոնի մասին: 2002 թ. օգոստոսին, իր հարսանիքից մի քանի օր առաջ, նա որոշում է մեկնել Պետերբուրգ եւ վայելել 7-րդ երկնքում գտնվելու հաճույքը: Մեկնելուց առաջ նա իր հարսնացուին խոստովանում է, որ ցանկանում է այնպիսի բան փորձել, որից արյունը երակներում սառչում է եւ պնդում, որ աղջկն անպայման ներկա լինի իր թռիչքին:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ ատրակցիոնը: Դա ուղղահայաց շարժվող վրա ամրացված մի բազկաթոռ էր, որը հետեւից կապված ռետինե պարանով ուժեղ ձգում էին ու բաց թողնում:

Միխայիլը տեղավորվում է բազկաթոռի վրա եւ վայրկյաններ անց սլանում է երկինք: Սակայն երբ նա հայտնվում է ատրակցիոնի ամենաբարձր կետում, բազկաթոռն անսպասելիորեն պտտվում է ներքեւ, որից հետո երիտասարդը գլխի վայր ընկնում է գետնին:

Հետաքննությունից հետո պարզվում է, որ այս ատրակցիոնը մասնավոր սեփականություն է, ինքնաշեն, մարդկանց կյանքը որեւէ ձեւով (ամրագոտիներ, արգելանքներ համակարգ եւ այլն) չի ապահովագրվում: Մնում է միայն զարմանալ, թե գոյության յոթ տարիների ընթացքում ինչպես ատրակցիոնը որեւէ ստուգման չի ենթարկվել եւ այլ դժբախտ պատահարների պատճառ չի դարձել:

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

Դժբախտությունը կարող է տեղի ունենալ նույնիսկ այն դեպքում, եթե դրա հավանականությունը կազմում է տոկոսի մեկ միլիոներորդ մասը:

2007 թ. մայիսին ճապոնիայի Օսակա քաղաքում գտնվող «Էքսպլենդ» ժամանցային այգու տեղի ունեցածը դրա լավագույն ապացույցներից է: Բոլորին ծանոթ «ամերիկյան բլրակների» տիպի

Մինչև 31 Դեկտեմբեր, Մինչև 31 Դեկտեմբեր

2004 թ. ամռանը Ստոկհոլմի ժամանցային այգիներից մեկում զբոսայգու աշխատակիցը փրկում է մի դեռահասի կյանքը: Բեն Հուր Պերեյրան զբոսայգու

